ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-3/12-1

ք. Երևան /3 .11.2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Բ. Գևորգյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **30 օրից** ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **30 օրից** ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 9873000 (ինը միլիոն ութ հարյուր յոթանասուներեք հազար) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 25 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ԱՀՏԱ վարչությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Մաքս Պրինտ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ ք. Երևան, Կոմիտասի Պ. 60/2
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 20517220074531001
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 00145961
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ. ՊԺԿ	Տնօրեն
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Բ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-3/12-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Անվանումը	Տեխնիկական հատկանիշը
1	Կացարանի դիտողական քարոզչական վահանակներ	Կացարանի վահանակների լրակազմը բաղկացած է՝ 70սմX100սմ չափով, թվով 3 հատ քարոզչության նյութից /քարոզչական վահանակներից/, որոնք պատրաստված են համապատասխան ջրադիմացկուն, չօգտագործված, լամինացված փայտանյութի հենքի վրա /ոչ պակաս՝ 8մմ հաստությամբ/, երիզված պատկերին համահունչ բարձրորակ շականակագույն շրջանակով՝ լայնությունը ոչ պակաս՝ 4 սմ: Վահանակի վրա փակցված պետք է լինի տպագրված բարձրորակ /1440 դպի/ ինքնակպչուն ու ջրադիմացկուն գունավոր պաստառ /առանց վնասվածքների և խոտանների, մակերևույթը ամբողջովին հարթ/, Շրջանակի ամրությունն ապահովելու համար շրջանակի անկյունային մասերը ետնամասերում ամրացված են <թիթեռնիկ> տեսակի ամրակներով: Ուղղահայաց շրջանակների ետնամասում, վերևից դեպի ներքև 10-15 սմ-ի վրա յուրաքանչյուր կողմում տեղադրվում են քարոզչական վահանակը պատից կախելու համար նախատեսված մետաղական, հարթ կախիչներ: Քարոզչական նյութերի բովանդակությունն ու թեմատիկական ուղղվածությունը տրամադրվում են պատասխանատու ստորաբաժանման կողմից /թղթային/: Տառերի տեսակը, չափը և նկարների չափսերը կարող են տարբերվել կախված նյութի ծավալից, ուստի նախապես համաձայնեցվում են պատասխանատու ստորաբաժանման հետ, /բովանդակությունը, թեմատիկան տրամադրվում է հրավերի կից **նկար 1-ով, 1.1, 1.2 A4 չափսով**/: Կատարողի իրականացրած դիզայնը /ըստ պահանջի մասնագիտական թարգմանություն, խմբագրություն, շարվածք, բովանդակության հերթականություն և ընտրված նկարներ/ համաձայնեցվում է պատասխանատու ստորաբաժանման հետ:
2	ՀՀ ՊՆ կոլեգիայի փոխանցիկ պատվոդրոշ	"ՀՀ ԶՈՒ լավագույն զորամաս" պատվոդրոշը պատրաստված է մուգ կարմիր (բալագույն) թավշապատ մահուդից, վերևում ուղղանկյունաձև է, ներքևում նման է կիսաշրջանաձև վահանի: Պատվադրոշի դիմերեսի վերնամասում ոսկեգույն տպատառերով ասեղնագործված են /ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐ/ 1 տառի բարձրությունը 4սմ, գծի հաստությունը 0,5սմ /+-0,1սմ/, իսկ ստորին մասում պատասխանատու ստորաբաժանման կողմից տրվող զորատեսակի անվանումը՝ 1 տառի բարձրությունը 2,5սմ, հաստությունը 0,4սմ /+-0,1սմ/: Տառատեսակի չափերը պետք է լինեն պատվադրոշի չափսերին համահունչ: Պատվոդրոշը ամողջությամբ առանց վնասվածքների, ելուստների և կողմնակի հետքերի: Զորատեսակի անվանման մեջ ոսկեգույն գրված է "Լավագույն" բառը: Պատվոդրոշի կենտրոնական մասում պատկերված է զորատեսակի խորհրդանիշը, որի արտաքին տեսքը նախապես համաձայնեցվում է պատասխանատու ստորաբաժանման հետ: Պատվոդրոշի աջ, ձախ և ներքևի կողմերը երիզված են ոսկեգույն ծոպերով, վերին կողմից ներդրված է արտաքուստ անտեսանելի մետաղյա ձող՝ երկարությունը 46սմ /+-1սմ/:, տրամագիծը 1,5սմ, ծայրերին ոսկեգույն գնդիկներով՝ տրամագիծը 2սմ., մետաղյա ձողի անցքի մեջ մտնող գնդիկի ելուստի երկարությունը 1,5սմ: Վերին երկու ծայրերը միացված են, հյուսված ոսգեգույն թելով՝ տրամագիծը 0,4սմ /+-0,1սմ/, պատվադրոշը կախելու համար: Պատվադրոշի չափսերն են. -լայնությունը՝ 45սմ, բարձրությունը կողմերում՝ 55սմ, ամենամեծ բարձրությունը՝ 65սմ /+-1սմ/: Պատվադրոշը տեղադրելու համար նախատեսված է նիկելե մետաղյա ձող՝ ոչ պակաս՝ 110սմ բարձրությամբ, 1,5սմ տրամագծով, վրան ամրացվող համապատասխան ոսկեգույն գլխիկով, ձողի վրա կեռաձև կախիչով և օնիքսե քարից շրջանաձև տակդիր՝ 14-15սմ տրամագծով, բարձրությունը 6-7սմ: Պատվոդրոշի լրակազմի արտաքին տեսքը նախապես համաձայնեցվում է պատասխանատու ստորաբաժանման հետ: Պատվոդրոշները՝ յուրաքանչյուրն առանձին փաթեթավորված /փաթեթավորման համար նախատեսված թափանցիկ պոլիէթիլենային տոպրակներով/:
3	Պատվոդրոշ մեծ	Արտաքին տեսքը կարմիր եռանկյունաձև, կարված է գունավոր տպագրությամբ պաստառներից, երկշերտ է, պատվադրոշի դիմային մասում ոսկեգույն տառերով տպագրված է զորատեսակների համապատասխան անվանումները, իսկ մեջտեղում պատկերված համապատասխան զորատեսակի տարբերանշանը, որոնք տրամադրվում են պատասխանատու ստորաբաժանման կողմից: Տառերի և տարբերանշանների չափսերը կարող են միմյանցից տարբերվել՝ կախված դրանց ծավալից: Պատվոդրոշի արտաքին տեսքի դիզայնը իրականացվում է մատակարարի կողմից, որը նախապես համաձայնեցնում է պատասխանատու ստորաբաժանման հետ: Պատվոդրոշի ետնամասը ամբողջությամբ կարմիր է: Պատվադրոշը եզրավորված է ոսկեգույն պարանով, վերին կողմից ներդրված է արտաքուստ անտեսանելի փայտե ձող՝ երկարությունը 35սմ, տրամագիծը 0,2 սմ /+-0,01սմ/: Վերին երկու ծայրերը միացված են, հյուսված ոսգեգույն պարանով՝ տրամագիծը 0,2 սմ /+-0,01սմ/, պատվադրոշը կախելու համար: Պատվոդրոշը պատրաստված է ատլասե կտորից, կտորների միջև տեղադրված է երկշերտ սոսնձակտոր՝ պատվոդրոշի ամրությունը ապահովելու համար: Պատվոդրոշը ամողջությամբ առանց վնասվածքների, ելուստների, կողմնակի հետքերի: Անհրաժեշտությունից ելնելով պատասխանատու ստորաբաժանումը կարող է նախապես փոփոխել նյութերը /բովանդակությունը/: Պատվադրոշները հանձնվում են ըստ զորատեսակների խմբավորված: Պատվոդրոշների խմբաքանակը փաթեթավորված ստվարաթղթե տուփի մեջ: Չափսերը՝ 35սմX42սմ: Պատվոդրոշի լրակազմը՝ ըստ պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացրած նմուշների:

		Անվանումները սահմանում է պատասխանատու ստորաբաժանումը:
4	Պատվոդրոշ միջին	Արտաքին տեսքը եռանկյունաձև, կարմիր գույնի, կարված է գունավոր տպագրությամբ պաստառներից, երկշերտ է, պատվադրոշի դիմային մասում ոսկեգույն տառերով տպագրված է զորատեսակների համապատասխան անվանումները, իսկ մեջտեղում պատկերված է համապատասխան զորատեսակի տարբերանշանը: Տառերի և տարբերանշանների չափերը կարող են միմյանցից տարբերվել՝ կախված դրանց ծավալից: Պատվոդրոշի արտաքին տեսքի դիզայնը իրականացվում է մատակարարի կողմից, որը նախապես համաձայնեցնում է պատասխանատու ստորաբաժանման հետ: Պատվոդրոշի ետնամասը ամբողջությամբ կարմիր է: Պատվադրոշը եզրավորված է ոսկեգույն պարանով տրամագիծը 0,2սմ, վերին կողմից ներդրված է արտաքուստ անտեսանելի փայտե ձող՝ երկարությունը 30սմ, տրամագիծը 0,2 սմ/+-0,1սմ/: Վերին երկու ծայրերը միացված են, հյուսված ոսգեգույն պարանով՝ տրամագիծը 0,2սմ /+-0,1սմ/, պատվադրոշը կախելու համար: Եռանկյունաձև պաստառը պատրաստված է ատլասե կտորից, կտորների միջև տեղադրված է երկշերտ սոսնձակտոր՝ պատվոդրոշի ամրությունը ապահովելու համար: Պատվոդրոշը ամողջությամբ առանց վնասվածքների, ելուստների, կողմնակի հետքերի: Անվանումները տրամադրվում է պատասխանատու ստորաբաժանման կողմից: Անհրաժեշտությունից ելնելով պատասխանատու ստորաբաժանումը կարող է փոփոխել նյութերը /բովանդակությունը/: Պատվադրոշները հանձնվում են ըստ զորատեսակների խմբավորված: Չափսերը՝ 30սմx36սմ: Պատվոդրոշի լրակազմը՝ ըստ պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացրած նմուշների: Պատվոդրոշների խմբաքանակը փաթեթավորված ստվարաթղթե տուփի մեջ: Անվանումները սահմանում է պատասխանատու ստորաբաժանումը:
5	Պատվոդրոշ փոքր	Արտաքին տեսքը կարմիր եռանկյունաձև, կարված է գունավոր տպագրությամբ ատլասե կտորից, երկշերտ է, պատվադրոշի դիմային մասում ոսկեգույն տառերով տպագրված է զորատեսակների համապատասխան անվանումները, իսկ մեջտեղում պատկերված համապատասխան զորատեսակի տարբերանշանը, որոնք տրամադրվում են պատասխանատու ստորաբաժանման կողմից: Տառերի և տարբերանշանների չափերը կարող են միմյանցից տարբերվել՝ կախված դրանց ծավալից: Պատվոդրոշի արտաքին տեսքի դիզայնը իրականացվում է մատակարարի կողմից, որը նախապես համաձայնեցնում է պատասխանատու ստորաբաժանման հետ: Պատվոդրոշի ետնամասը ամբողջությամբ կարմիր է: Պատվադրոշը եզրավորված է ոսկեգույն պարանով տրամագիծը՝ 0,2սմ, վերին կողմից ներդրված է արտաքուստ անտեսանելի փայտե ձող՝ երկարությունը 25սմ, տրամագիծը 0,2սմ /+-0,1սմ/: Վերին երկու ծայրերը միացված են, հյուսված ոսգեգույն պարանով՝ տրամագիծը 0,2սմ, պատվադրոշը կախելու համար: Եռանկյունաձև պաստառը պատրաստված է ատլասե կտորից, կտորների միջև տեղադրված է երկշերտ սոսնձակտոր՝ պատվոդրոշի ամրությունը ապահովելու համար: Պատվոդրոշը ամողջությամբ առանց վնասվածքների, ելուստների և կողմնակի հետքերի: Անհրաժեշտությունից ելնելով պատասխանատու ստորաբաժանումը կարող է փոփոխել նյութերը /բովանդակությունը/: Պատվադրոշները հանձնվում են ըստ զորատեսակների խմբավորված: Չափսերը՝ 25սմx32 սմ: Պատվոդրոշի լրակազմը՝ ըստ պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացրած նմուշների: Պատվոդրոշների խմբաքանակը փաթեթավորված ստվարաթղթե տուփի մեջ: Անվանումները սահմանում է պատասխանատու ստորաբաժանումը:
6	ՀՀ ԶՈՒ զինանշան	ՀՀ ԶՈՒ զինանշանի պատկերով ասեղնագործված պանո, վերևում ուղղանկյունաձև է, ներքևում նման է կիսաշրջանաձև վահանի, շրջանակը փայտանյութից, լաքապատ՝ լայնությունը 37,5 սմ, բարձրությունը 45 սմ /+-1սմ/: Շրջանակի հաստությունը՝ 3,5սմ /+-0,5սմ/: Ասեղնագործությունը՝ գունավոր թելերով: <<ՀԱՅԱՍՏԱՆ>> բառը ասեղնագործված է արծաթագույն տառերով, կապույտ ֆոնի վրա, 1 տառի բարձրությունը՝3,5սմ, գծի հաստությունը 1սմ /+-0,2սմ/, <<ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐ>> բառակապակցությունը ասեղնագործված է կապույտ գույնով, 1 տառի բարձրությունը 2,3սմ /+-0,2սմ/, գծի հաստությունը 0,5սմ /+-0,1սմ/: Ետևի մասում փակած է կոշտ թղթով և ամրացված է կախիչ: ՀՀ ԶՈՒ զինանշանը փաթեթավորված ստվարաթղթե տուփով, վրան գունավոր զինանաշանի պատկերով: Յուրաքանչյուր տուփում մեկ հատ ՀՀ ԶՈՒ զինանշան: Նմուշը անհրաժեշտ է նախապես համաձայնացնել պատասխանատու ստորաբաժանման հետ: Զինանշանը առանց կողմնակի հետքերի, ասեղնագործած պատկերը հստակ, առանց ելուստների:
7	ժամացույց	ՀՀ ԶՈՒ զինանշանով ապակեպատ ժամացույց, տրամագիծը 25սմ, մեխանիզմը գործարանային արտադրության՝ մեկ հատ մարտկոցով, պատասխանատու ստորաբաժանման հաստատած դիզայնով: Ընդհանուր մակերեսի վրա տպագրված է ՀՀ ԶՈՒ զինզնշանի նկարը՝ բարձրությունը 6սմ, լայնքը 6սմ, զինանշանից ներքև կարգախոս՝ պատասխանատու ստորաբաժանման կողմից տրամադրված բառերով /ժամանակն աշխատում է հոգուտ արժանավորի Գ.Նժդեհ/՝ 1 տառի բարձրությունը 0,5սմ, գծի հաստությունը 0,1սմ /+-0,01սմ/: Յուրաքանչյուրը փաթեթավորված արտաքին տեսքին համապատասխան դիզայներական ստվարաթղթե տուփով: ժամացույցի արտաքին տեսքը նախապես համաձայնեցվում է պատասխանատու ստորաբաժանման հետ:
8	Հուշանվեր՝ շախմատ դեկորատիվ.	Կոմպլեկտը պետք է լինի փակ վիճակում՝ 50սմx25սմx5սմ չափսի: Լիովին չորացված հաճարի փայտից, լաքապատված և առանց խոտանների, կողմնակի հետքերի, դեկորատիվ ծղնիներով ու փականներով: Հուշանվերային շախմատի համապատասխան փայտե արձանիկ խաղաքարերով: Խաղաքարերի հիմքի տրամագիծը 3սմ՝ տակը մահոգե կտորով պատված, բարձրությունը՝ զինվորների համար 6սմ, ֆիգուրների համար /արքա, թագուհի/ 9սմ, /նավակ, փիղ, և ձի/ 8սմ: Յուրաքանչյուր հուշանվեր պետք է ունենա սև կամ մուգ շագանակագույն բրեզենտե կտորից բռնակներով պայուսակ, որի մուտքը փակվում է շղթայով: Նմուշը նախապես համաձայնեցվում է պատասխանատու ստորաբաժանման հետ:
9	Հուշանվեր՝ նարդի դեկորատիվ.	Կոմպլեկտը պետք է լինի՝ բացվաց վիճակում՝ 60սմx60սմx3սմ: Նարդին պետք է պատրաստված լինեն ընկուզենու լիովին չորացված փայտից, հարթեցված, հղկված և լաքապատված: Նարդու դիմերեսին փորագրված հայկական խորհրդանիշներ, որոնց էսքիզը նախապես համաձայնեցվում է պատվիրատուի հետ: Խաղադաշտերի վրա պետք է սահմանված կարգով տեղադրված և հարմարեցված լինեն երկուական մետաղական ծղնիներ և փականներ: Փայտե խաղաքարեր՝ 16 մուգ և 16 բաց՝ տրամագիծը 3սմ, բարձրությունը 1սմ և 2 հատ զառ: Յուրաքանչյուր հուշանվեր պետք է ունենա սև կամ մուգ շագանակագույն

		բրեզենտե կտորից բռնակներով պայուսակ, որի մուտքը փակվում է շղթայով: Նմուշը նախապես համաձայնեցվում է պատասխանատու ստորաբաժանման հետ:
10	ՀՀ ՋՈՒ զինանշան՝ ժամացույց.	ՀՀ ՋՈՒ զինանշանի պատկերով հուշանվերային ապակե ժամացույց՝ չափսերը 40սմX50սմX0,4սմ՝ հետնամասում պատին կախելու հարմարանքով: Ապակու վրա, ամբողջ մակերեսով գունավոր տպագրված է «ՀՀ ՋՈՒ զինանշանը», իսկ ապակու եզրագծով, համահունչ ժամացույցի չափերին, հռոմեական թվերով /նիշերով/ թվային դաշտը: Մեջտեղում տեղադրված է ժամացույցի գործարանային արտադրության բարձրորակ մեխանիզմ՝ որի մետաղյա սլաքները համահունչ են զինանշանի պատկերին և չափսին: Հուշանվերը փաթեթավորված օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ թաղանթով՝ տեղադրված համապատասխան ստվարաթղթե տուփի մեջ, տուփի վրա պատկերված հուշանվերի նկարը; Կոմպլեկտում մեկ հատ մարտկոց: Ժամացույցի արտաքին տեսքը՝ ըստ նկար 2-ի, նախապես համաձայնեցվում է պատասխանատու ստորաբաժանման հետ:
11	Օվալաձև հուշանվերային ժամացույց.	Չափսերը 46սմX53սմ, սպիտակ բամբակե կտորի վրա 200գ/մ քառակուսի խտությամբ՝ ասեղնագործված Արարատ լեռան, հայկական արծվի և ՀՀ ՋՈՒ զինանշանի համադրմամբ՝ գեղարվեստական պատկերով, արծվի թևերի վերնամասում պատկերված եռագույն դրոշ՝ ձգված 2սմ հաստությամբ փայտե օվալաձև շրջանակի մեջ, շրջանակը լաքապատված և առանց վնասվածքների՝ հետնամասում պատին կախելու հարմարանքով: Ասեղնագործությունը առանց հավաքների (փոնթերի): Ժամացույցի ընդհանուր մակերեսի վրա ասեղնագործվում է կարգախոս՝ պատվիրատուի կողմից տրամադրված բառերով, որը տրամադրվում է մատակարարին մեկ ամիս առաջ: Տառերի չափսերը համահունչ դիզայնին: Մեջտեղում տեղադրված է ժամացույցի գործարանային արտադրության բարձրորակ մեխանիզմ՝ որի մետաղյա սլաքները համահունչ են զինանշանի պատկերին և չափսին: Հուշանվերը փաթեթավորված համապատասխան ստվարաթղթե տուփի մեջ, տուփի վրա պատկերված հուշանվերի նկարը; Կոմպլեկտում մեկ հատ մարտկոց: Ժամացույցի արտաքին տեսքը՝ ըստ նկար 3-ի, նախապես համաձայնեցվում է պատասխանատու ստորաբաժանման հետ:
12	Հուշանվեր ժամացույց՝ ՀՀ զինանշան (փայտե)	Ժամացույցը պատրաստված է հաճարե չորացված փայտից մեկ կտորից (ամբողջական)՝ տրամագիծը 35սմ, հաստությունը՝ 3սմ, լաքապատ և առանց վնասվածքների՝ հետնամասում պատին կախելու հարմարանքով: Ժամացույցի մեխանիզմը բարձրորակ գործարանային արտադրության, դիզայնին համահունչ մետաղյա ցուցիչներով, թվանշանները փորագրված եզրագծով՝ արաբական թվերով /նիշերով/: Հուշանվերը փաթեթավորված համապատասխան ստվարաթղթե տուփի մեջ, տուփի վրա պատկերված հուշանվերի նկարը; Կոմպլեկտում մեկ հատ մարտկոց: Ժամացույցի արտաքին տեսքը՝ ըստ նկար 4-ի, նախապես համաձայնեցվում է պատասխանատու ստորաբաժանման հետ:
